



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2023 թվականի N 61-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝
ավագանին որոշում է.

Հաստատել Բյուրեղավան համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 22-ի
երրորդ նստաշրջանի արտահերթ թիվ 12 նիստի հետևյալ օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝
սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի,
Նուռնուս և Ջրաբեր գյուղերի փողոցների, բնակելի շենքերի բակերի բարեկարգման և
ասֆալտապատման աշխատանքներ» ծրագիրը հաստատելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝
սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան
բնակավայրի խաղահրապարակների կառուցում» ծրագիրը հաստատելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝
սուբվենցիաներ ստանալու նպատակով «Բյուրեղավանում ոռոգման համակարգի ներքին
ցանցի վերանորոգման և կառուցման աշխատանքներ» ծրագիրը հաստատելու մասին:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 25-ի N 63-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին:

6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գինը հաստատելու մասին:

7. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ – 8

ԲԱԼԱՍՅԱՆ ՀԱԿՈՔ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԴԱՆԻԵԼ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԱՐՓԻՆԵ

ՊԻՃԻԿՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԴԵՄ – 7

ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԱԳ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍ

ՄԱՐՈՒՔՅԱՆ ԱՇԽԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԱՂԻՅԱՆ ՎԱԼԵՆՏԻՆԱ

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ ՍՈՍ

Handwritten signature

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՀԱԿՈՒԲ ԲԱԼԱՍՅԱՆ